

# ՀԱՅԵՐԸ ՌՈՒՄԱՆԻՈՅ ՄԷՉ

Գրեց՝ Յ. ձ. ՄԻՐՈՒՆԻ

ԳՂՈՒԽ Ա.

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

**Մ**ԵՑ է թիւը այն հայերուն, որոնք դեր խաղացած են ուսման երկիրներուն մէջ, գրեթէ հանրային ամէն մարդի վրայ: Տուած ենք այս երկրին արուեստի ու գրչի մարդիկ, նախարար ու զորավար, դիտութեան ու օրհնքի վարպետներ: Ու անոնցմէ շատերուն կեանքը դեռ մութի մէջ կը մնայ:

Ռուսմանահայ գաղութի կեանքը, ինչպէս լեհաստանինը, սերտուելու պէտք ունի: Ան եղած է ամենէն հիներէն մէկը, եւ ամենէն տեւականը այդ հիներուն մէջ: Հատած լմնցած են այդ հիներէն շատերը, բայց ինք կրցած է դարերուն աւելի երկար դիմանալ: Ու պրպըտումի ինչ աւելի աղուոր նիւթ քան քննել թէ ինչո՞ւ ուրիշ գաղութներ շուտ մը հատան, ու ուսմանահայը կը չնչ տակաւին:

Անցեալին անձանօթ մէկ խորը ճրագ տանելու, մեր նախնիքներու պատմութեան մէկ մութ էջը լուսաւորելու համար չէ միայն որ անհրաժեշտ դարձած է գրել մեր հին գաղութներուն կեանքը: Հնախօսական պրպտում մը պիտի ըլլար սո՞ ինչպէս եւրոպացի դիտակալները կ'ընեն հեռաւոր աւերակները երթալ գննելով եւ խուզարկելով: Մեր գաղութներու կեանքը ուրիշ դասեր ունի մեզ համար: Հոնկէ մենք պիտի քաղենք շատ մը բան մեր վաղուան կեանքին համար: Զանխկա սերտել մեզ համար պիտի ըլլայ վաղուան մեր ճանապարհը բանալու պէս բան մը: Անոր բերած լոյսովը պէտք է քալենք մենք վաղը:

Ռուսման երկիրներ ըսելով մենք պիտի հասկնանք այսօրուան բովանդակ Ռուսմանիան, ոչ միայն նախապատերազմեանը՝ զոր կը կազմէին Մոլոտովա եւ Վալաքիա հին իշխանապետութիւնները, այլ նաեւ այն ուսման հողերը որոնք վերջին պատերազմէն յետոյ միացան մայր հայրենիքին, — Թրանսիլվանիան, Տօպրուճան, Պուքօվինան եւ Պասարապիան, ուր եւս ապրած են հայերը դարերու ընթացքին:

Ու կրկնակ էր մեզ այդ բանին դրդող շարժառիթը: Նախ որ ամբողջութիւն մըն են հիմա ուսման երկիրները, միաձոյլ ու միապալաղ: Ռուսման ժողովուրդը գտած է իր միութիւնը՝ իր պատմական սահմաններուն մէջ: Ու այդ սահմաններուն մէջ ապրող հայերն ալ, հիմա, կը կազմեն միակ գաղութ մը, թէեւ տարբեր ըլլայ անոնց մայրենի լեզուն, — ուսմաներէն, հունգարերէն, ռուսերէն, թուրքերէն եւ հայերէն, — եւ թէեւ ամէն շրջան պահած ըլլայ իր ուրոյն բարքն ու աւանդութիւնները, նոյնիսկ ունեցած տարբեր դասանանք:

Աշխարհագրական այս մտահոգութենէն զատ կայ եւ պատմականը: Այս բոլոր շրջանները դարերու ընթացքին յաճախ կապ ունեցեր են իրարու հետ, ու հետեւաբար կը լուսարանէ մէկը միւսին պատմութիւնը: Ռուսմանիոյ այդ բոլոր շրջաններուն մէջ միշտ ալ ապրեր է հայ գաղութ մը, սերտօրէն կապուած իր դրացիին հետ: Ռուսմանահայ գաղութին կեանքը գրեթէ ատեն կարելի չէր իրարմէ անջատել զանոնք ու սահմանափակուիլ միայն հին Ռուսմանիոյ մէջ, նոյնիսկ եթէ, հայ բանասիրութեան համար, բոլորովին անկախ գետին մը ըլլային Թրանսիլվանիան ու Պուքօվինան՝ օրինակի համար, որքան են Մոլոտովան ու Վալաքիան:

Ուզեցի հաւաքած նիւթերս փրկել: Ռուսմանիան պտտած ատեն՝ բախտը ձեռքս ձգեց շատ մը հում նիւթեր, որոնք պիտի կարենային լոյս տիտել գաղութի մը անցեալին վրայ: Մեղը պիտի ըլլար այդ նիւթերէն չօգտուել: Մանաւանդ անոնցմէ շատը անարժէք պիտի դառնար սերունդ մը յետոյ, երբ այլեւս չըլլային զանոնք լուսարանելու կարող մարդիկը:

Այս ուսումնասիրութիւնը տեսակ մը շարունակութիւնն է այն միւս աշխատութեանս, զոր այս ամսագիրը անցեալ տարի տպեց «Հայ Մտքին եւ Արուեստին Հետքերը Ռուսմանիոյ մէջ» տիտղոսով: Հոն առաւելապէս ծանրացեր էի այն ազդեցութեան վրայ, զորս հայ արուեստը ունեցեր էր այս երկրին մէջ, մասնա-